

Յայտարարութիւն գործադիր գրասենեակէն

Ազգային Համակարգող Մարմին Սուրիոյ մէջ

Ժողովրդավարական Փոփոխութեան Ուժերու Ազգային Համակարգող Մարմնի գործադիր գրասենեակը հաստատեց Համակարգող մարմնի դերին և մասնակցութեան կարելորութիւնը Ժընեւ-2 խորհրդաժողովին, ինչպէս բացայայտեց ան իր յայտնի որոշումներուն իր միջազգային նամակցութիւններուն մէջ, խորհրդաժողովը յաջողցնելու համար պահանջուած տուեալներն ու պայմանները ապահովուելէն ետք:

Երկխօսութեան նիստերը, որ տեղի ունեցաւ անցեալ օրերու ընթացքին, Համակարգող Մարմնի ներկայացուցիչներուն գլխորութեամբ՝ ընդհանուր համակարգողի և Ազգային Համաձայնական մարմնի ներկայացուցիչներուն գլխաւորութեամբ՝ Համաձայնական մարմնի նախագահին միջեւ, քննարկեց «Ժընեւ 2»-ի աշխատանքներուն մասնակցութեան խնդրահարոյցները՝ «և հաստատեցին անհնրաժեշտութիւնը հաւատարիմ մնալու «Ժընեւ 1»-ի յայտարարութիւններուն, նաև համոզիչ ու հաւասարակշռուած ներկայացուցիչութեան մասնակցութիւնը Սուրիական ընդդիմութեան պատուիրականութեան մէջ, ըստ քաղաքական համաձայանութեան կէտերուն, ժողովրդավարական ազգային տարբեր ուժերուն միջեւ:

Գործադիր գրասենեակը որոշեց սպասել Համաձայնական մարմնին դիրքորոշումը կազմակերպչական ու քաղաքական փաստաթուղթերէն, և տեղեկացնել իր որոշումը Համակարգող մարմնին, նաև կասեցնել երկխօսութիւնը Համաձայնական մարմնին հետ մինչեւ իր պաշտօնական պատասխանին ստացումը:

Գործադիր գրասենեակ

Դամասկոս, 08/02/2014